



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2016Թ.  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏՆՕՐԵՆ՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՓԵՏՐՎԱՐ, 2017



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3**
- 1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ..... 8**
  - 1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ ..... 8
  - 1.2. ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ..... 8
  - 1.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ..... 9
- 2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ..... 16**
  - 2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ..... 16
  - 2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ..... 16
  - 2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ..... 17
- 3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ..... 20**
  - 3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ..... 20
  - 3.2. ՍՆԵԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ ..... 20
  - 3.3. ՆԱԿԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ..... 21
- 4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ..... 22**
  - 4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ..... 22
  - 4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ..... 24
- 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ..... 25**
- 6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 25**
- 7. 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 27**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ**  
**2016թ. գործունեության վերաբերյալ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվ:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ պարենային և ոչ պարենային ապրանքների, հանրային սննդի ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2016թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է իր կանոնադրությամբ և հետևյալ հիմնական իրավական ակտերով՝

1. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
2. «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք
3. «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2010-2020թթ. ռազմավարությամբ»
5. ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2016 թվականի ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 397-Ա որոշման
6. «Ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիրը և ստանդարտացման աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ամենամյա ՀՀ կառավարության որոշումներով (օրինակ՝ ՀՀ կառ. 2016 թվականի հունիսի 9-ի N 612-Ա որոշում)
7. ՀՀ կառավարության 26.02.1998թ. «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշում
8. ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակների շնորհման կարգը հաստատելու մասին» N 890-Ն որոշում
9. Տեխնիկական կանոնակարգերը հաստատող ՀՀ կառավարության որոշումներ և այլն:

Ստանդարտների ազգային ինստիտուտի ռազմավարական նպատակներն են՝

- Խթանել հայկական ապրանքատեսակների առևտուրը միջազգային շուկաներում,
- Երաշխավորել ազգային ստանդարտների շարունակական բարելավումը և համապատասխանեցումը փոփոխվող պահանջներին,
- Բարձրացնել ազգային ստանդարտների ընկալումը, ճանաչումը և կիրառումը,
- Բացահայտել և լուծումներ առաջարկել այն ազգային խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են կարգավորվել ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի միջոցով:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որը միջազգային շրջանակներում հայտնի է իր «SARM» հապավումով, այն է՝ «Հայաստանի ստանդարտներ», իր մեջ ներառում է գործունեության հետևյալ հիմնական ծառայությունները.

- Ստանդարտացման, այդ թվում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարման ծառայությունները,
- Համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման), այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայությունները,
- Պարենային և ոչ պարենային ապրանքների, այդ թվում՝ նավթամթերքի և էլեկտրատեխնիկական լաբորատոր փորձարկումները,
- Ուսումնական կենտրոնը:

Բոլոր ծառայությունները ղեկավարվում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ ՍԱԻ-ի տնօրենի համակարգման ու ղեկավարման ներքո: Բոլոր ուղղություններով գործունեության պատասխանատվությունը կրում է ՍԱԻ տնօրենը:

Գործունեության կարևորագույն ուղղություններից է ստանդարտացման ոլորտում միջազգային համագործակցությունը: Ստանդարտների ազգային ինստիտուտը 1997թ-ից ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը **ԻՍՕ (ISO) միջազգային ստանդարտացման կազմակերպությունում լիիրավ անդամի** և 2008 թվականի հունվարի 1-ից **ՍԵՆ (CEN) Ստանդարտացման Եվրոպական կոմիտեում՝ միացող (affiliate) անդամի** կարգավիճակով: Միաժամանակ ակտիվորեն մասնակցում է ԻՍՕ-ի և ՍԵՆ-ի տեխնիկական հանձնաժողովների և ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որպես ստանդարտացման ազգային մարմին 1992թ.-ից անդամակցում և մասնակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների **Սրանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՍՀՍ ՄՊԽ)** ստանդարտացման կոմիտեների աշխատանքներին:

Ինստիտուտի գործունեության ուղղություններում կարևոր տեղ են զբաղեցնում ազգային (<US), միջպետական (ԳՕՍՍ) ստանդարտների մշակումը և փորձաքննությունը, միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպումը, ազգային ստանդարտների նախապատրաստումը և ընդունումը, ինչպես նաև ստանդարտացման բնագավառի գիտա-մեթոդական աշխատանքները: Ինստիտուտը կորոզինացնում է ՀՀ տարածքում գործող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտը ձևավորում և վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ֆոնդը, որը համալրված է շուրջ 35000 միավոր

ստանդարտացման փաստաթղթերով, այդ թվում՝ միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության ստանդարտներով (ՀՍ) և այլ պետությունների ստանդարտներով:

Ազգային ֆոնդի վարման և տեղեկատվության ապահովման աշխատանքների ավտոմատացման նպատակով ՀՀ-ում գործող ստանդարտների մատենագիտական տվյալների հիման վրա 1993թ. հետո ստեղծվել և ներդրվել է տեղեկատվական որոնման էլեկտրոնային համակարգ “SARM”, որը հնարավորություն է տալիս կազմակերպություններին և անհատներին փնտրել և ձեռք բերել իրենց գործունեության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթեր:

Ինստիտուտն ունի հավատարմագրված արտադրանքի, ծառայությունների և կառավարման համակարգերի (ԻՍՕ 9000, ԻՍՕ 14000 և ԻՍՕ 22000) սերտիֆիկացման մարմիններ, որոնք իրականացնում են նշված ոլորտների համապատասխանության հավաստման աշխատանքներ, ինչպես նաև լայն անվանացանկի արտադրատեսակների փորձարկումներ:

Ընկերության ուսումնա-մեթոդական կենտրոնում կազմակերպվում է առանձին ստանդարտարտների կիրառման վերաբերյալ հետաքրքրված անձանց ուսուցում:

Ստորև ներկայացվում են Ինստիտուտի գործունեության վերաբերյալ որոշ հակիրճ տեղեկություններ:

## SARM-ը թվերով

<p>Ստանդարտացման ազգային (հայելային) տեխնիկական հանձնաժողովները (ՏՀ)</p>	<ul style="list-style-type: none"> <li>- 26 ՏՀ-ներ, որոնց կազմում ընդգրկված են <b>շուրջ</b> <ul style="list-style-type: none"> <li>- 400 փորձագետ</li> <li>- 250 շահագրգիռ կազմակերպություններ (պետական մարմիններ, մասնավոր և հասարակական կազմակերպություններ, այլ)</li> <li>- 100 ՏՀ և ԱԽ նիստ և քննարկում՝ տարեկան</li> </ul> </li> <li>- Ազգային ՏՀ-ները հանդիսանում են հայելային ՏՀ-ներ՝ <ul style="list-style-type: none"> <li>- 40 ԻՍՕ ՏՀ-ների (լիիրավ)</li> <li>- 28 ԻՍՕ ՏՀ-ների (դիտորդ)</li> <li>- 3 ՍԵՆ ՏՀ-ների մասնակից</li> <li>- 63 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (լիիրավ, որից՝ 2 ՏՀ քարտուղարություն)</li> <li>- 49 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (դիտորդ)</li> </ul> </li> </ul>
--	--

<p>Բաժանորդներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- <b>38 կազմակերպություն,</b></li> <li>- <b>Մշտական խորհրդատվություն՝ ոլորտային ստանդարտների վերաբերյալ</b></li> </ul>
--------------------	---

<p>ՀՀ ստանդարտների մշակումը 2016 թվականին</p>	<p><b>Ազգային ստանդարտներ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <b>ՀՀ ազգային (ՀՍ)</b>՝ 15,</li> <li>- <b>Միջազգայինից փոխակերպված՝ 24,</b> որից ՀՍ ԻՍՕ – 23 ՀՍ ԻԷԿ – 1</li> <li>- <b>Եվրոպականից փոխակերպված (ՀՍ ԵՆ)</b>՝ 2</li> <li>- <b>Միջպետական ստանդարտներ՝ 614,</b> որից ԳՕՍ – 435, ԳՕՍ ԵՆ – 29, ԳՕՍ ԻՍՕ – 99, ԳՕՍ ԻԷԿ – 51</li> <li>- <b>ՌԴ ստանդարտներ՝ 22,</b> որից ԳՕՍ Ռ – 19, ԳՕՍ Ռ ԻՍՕ – 2, ԳՕՍ Ռ ԻԷԿ – 1</li> </ul>
---	--

### Ընդամենը՝ 677 ազգային ստանդարտ

<p>Ընդհանուր 1993-2016 թթ ընթացքում</p>	<p><b>Ազգային գործող ստանդարտներ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <b>Զուտ ազգային (ՀՍ)</b>՝ 375</li> <li>- <b>Միջազգայինից փոխակերպված՝ 528</b> <i>այդթվում՝</i> ՀՍ ԻՍՕ - 452, ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ -51, ՀՍ ԻԷԿ -2, ԻՍՕ -7, ՀՍ ՕՀՍԱՍ - 1,</li> </ul>
---	---

- ՀՍ (ԻՍՕ) - 13,
- ՀՍ (ԻՍՕ/ԻԷԿ) - 2,
- **Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված՝ 231**  
*այդ թվում՝*  
ՀՍ ԵՆ225,  
ՀՍ ԵՏՍԻ ՏՍ -4,  
ՀՍ ԱՆՍԻ - 1,  
ԵՆ- 1.
- **Միջպետական ստանդարտներ (ԳՕՍՏ)՝ 4983, որից՝**  
ԳՕՍՏ - 3398,  
ԳՕՍՏ ԻՍՕ - 451,  
ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ - 5,  
ԳՕՍՏ ԵՆ - 201,  
ԳՕՍՏ ԻԷԿ - 407,  
ԳՕՍՏ (ԻՍՕ) - 344,  
ԳՕՍՏ (ԻԷԿ) - 123,  
ԳՕՍՏ (ԵՆ) - 11,  
ԳՕՍՏ (ԻՍՕ/ԻԷԿ) - 3,  
ԳՕՍՏ (Կանոններ ՄԱԿ ԵԷԿ) - 3,  
ԳՕՍՏ (ՍԻՍՊՌ) - 2,  
ՀՍ ԳՕՍՏ - 33,  
ՀՍ (ԳՕՍՏ) - 2.
- **ՌԴ ազգային ստանդարտներ (ԳՈՍՏ Ռ)՝ 1323, որից**  
ԳՕՍՏ Ռ -956,  
ԳՕՍՏ Ռ ԻՍՕ - 102,  
ԳՕՍՏ Ռ ԻՍՕ/ԻԷԿ - 2,  
ԳՕՍՏ Ռ ԻԷԿ -133,  
ԳՕՍՏ Ռ ԵՆ - 60  
ԳՕՍՏ Ռ (ԻՍՕ) - 15,  
ԳՕՍՏ Ռ (ԻԷԿ) - 44,  
ԳՕՍՏ Ռ (ԵՆ) - 1,  
ԳՕՍՏ Ռ (Կանոններ ՄԱԿ ԵԷԿ) - 3,  
ԳՕՍՏ Ռ (ԴԻՆ) - 4,  
ԳՕՍՏ Ռ (ՍԻՍՊՌ) - 3.

**Ընդամենը՝ 7448 ազգային ստանդարտ**

Համագործակցություն

ՍԱՐՄ-ը անդամակցում է՝  
**ԻՍՕ**-ին 1997թ.-ից (լիիրավ)  
**ՍԵՆ**-ին 2007 թ.-ից գործընկեր, իսկ 2008 թ.-ից միացող անդամ  
**ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ** ստանդարտացման բյուրոին 1992թ.-ից

Տեխնիկական  
ինֆորմացիայի  
էլեկտրոնային  
հասանելիությունը

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ ստանդարտացման  
գործունեության ողջ ինֆորմացիան հասանելի է առցանց  
[www.sarm.am](http://www.sarm.am) հասցեով:  
Օգտվողները այստեղ կարող են գտնել.  
- ստանդարտների կիրառման վերաբերյալ տվյալներ  
- ստանդարտների նախագծեր

# 1. ԻՆՍՏԻՏՅԻՈՆԱԼ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

## 1.1. ԻՆՍՏԻՏՅԻՈՆԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2016 թվականի ապրիլի 22-ի «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը և 2016 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի հունիսի 1-ի N 704-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 394-Ա հրամանով հաստատվել է Ընկերության կառուցվածքը և հաստիքացուցակը, ինչպես նաև 2016 թվականի տարեկան եկամուտների կանխատեսումները ու ծախսերի նախահաշիվը:

Ելենելով Ընկերության գործունեության ֆինանսատնտեսական անբարենպաստ ցուցանիշներից ու ի հայտ եկած մրցակցային ու օրենսդրական դաշտի նոր իրողություններից հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից մշակվել և նախարարության քննարկմանն է ներկայացվել նոր գործարար ծրագիր՝ ինստիտուցիոնալ կառուցվածքի և գործունեության բարեփոխման առաջարկություններով: Քննարկումների արդյունքում, որպես բարեփոխումների նախաձեռնման առաջին քայլ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016-12-30 թիվ 1404-Ա հրամանով կատարվեց վերը նշված հրամանի փոփոխություն, որով հաստատվեց Ընկերության նոր կառուցվածքը: Այդուհանդերձ, նոր կառուցվածքի ներդրումը պահանջում է նաև գործող հաստիքացուցակի համապատասխանեցում, որը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի 1-ին եռամսյակում:

## 1.2. ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2016 թվականի ապրիլի 22-ի N394-Ա հրամանով Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվեցին փոփոխությունների, որոնք ուղղված էին ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, հաստիքացուցակի վերանայմանը և աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի կրճատմանը:

Աղյուսակ 1-ում բերվում է ՍԱԻ ընկերության հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2012-2016թթ. դինամիկան:

**Աղյուսակ 1**

### **Ինստիտուտի հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2012-2016թթ. դինամիկան**

		2012	2013	2014	2015	2016
1.	Հաստիքային աշխատողների միջին թվաքանակ, մարդ	126	122	112	115	113
2.	Միջին աշխատավարձ, դրամ	103153	113675	117180	135211	143826

Հաշվետու ժամանակամիջոցում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը



կապված էր ընկերության նոր կառուցվածքի և հաստիքացուցակի սահմանման հետ: Մշակվել և հաստատվել են բոլոր հաստիքների նոր պաշտոնական հրահանգները և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը:

### **1.3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

#### **1. ԻՍՕ Խորհրդի 99-րդ արտահերթ նիստը հունվարի 27-ին**

ԻՍՕ Խորհուրդը բաղկացած է 20 անդամ մարմիններից: Հայաստանն ի դեմս Ստանդարտների ազգային ինստիտուտի 2014 թվականի սեպտեմբերին Ռիո դե Ժանեյրոյում կայացած ԻՍՕ վեհաժողովի ժամանակ փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվեց ԻՍՕ Խորհրդի անդամ երեք տարի ժամկետով:

2016 թվականի հունվարի 27-ին Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ ԻՍՕ Խորհրդի արտահերթ 99-րդ նիստը, որին մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը: ԻՍՕ Խորհրդի արտահերթ նիստի օրակարգի գլխավոր հարցը ԻՍՕ նոր գլխավոր քարտուղարի ընտրությունն էր: Այդուհանդերձ, նախնական ընտրված երեք թեկնածուներից ոչ մեկը Խորհրդի հավանությանը չարժանացավ և որոշում կայացվեց վերանայել ընտրության չափանիշները և նոր մրցույթ հայտարարել:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը առանձին հանդիպումներ ունեցավ ՌԴ Ռոսստանդարտի պետ Ա.Աբրամովի, Գերմանիայի Ստանդարտների ազգային ինստիտուտի (DIN) տնօրեն Ռուդիգեր Մարքարդի, ԱՄՆ Ստանդարտացման ազգային մարմնի (ANSI) նախագահ Ջո Բաթիայի հետ, որոնց ընթացքում քննարկվեցին համագործակցության և ստանդարտացման ոլորտի մի շարք հարցեր: ԱՄՆ Ստանդարտացման ազգային մարմնի (ANSI) նախագահ Ջո Բաթիայից հրավեր ստացվեց այցելել ԱՆՍԻ-ին և ստորագրել համագործակցության հուշագիր:

#### **2. ՀՀ-ԵՄ առևտրի և ներդրումների հարցերի բանակցությունների առաջին փուլը**

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև հարաբերությունների նոր իրավական հիմք ձևավորելու գործընթացի շրջանակներում փետրվարի 15-ին Բրյուսելում մեկնակել է ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագրի առևտրի և ներդրումների հարցերի բանակցությունների առաջին փուլը:

Բանակցություններին ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյանի գլխավորությամբ ՀՀ պատվիրակության կազմում մասնակցեց նաև Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ փոխտնօրեն Գևորգ Նազարյանը՝ առևտրի տեխնիկական խոչընդոտների ոլորտում պայմանագրի դրույթների հստակեցման ու նախապատրաստման նպատակով:

Ընդհանուր առմամբ, բանակցությունների առաջին փուլը բավական տարողունակ և ընդգրկուն էին: Բանակցությունների լիազումար նիստերից բացի անցկացվեցին բանակցային ենթախմբերի 12-ից ավելի հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվեցին համապատասխան ուղղությունների տեքստերի նախագծերը: Քննարկվեցին նաև բանակցային հետագա գործընթացներին, փուլերին, ժամանակացույցին, ինչպես նաև ոլորտային ապագա համագործակցության որոշ խնդիրներին առնչվող հարցերը:

### **3. Միջպետական խորհրդի (ՄՊԽ) արտահերթ նիստը 2016թ. մարտի 1-ին անցկացվեց Մոսկվայում**

ՄՊԽ 49-րդ արտահերթ նիստը կազմակերպվեց և անցկացվեց Մոսկվայում, ՌԴ: ԱՊՀ 8 երկրների պատվիրակություններ մասնակցեցին նիստի աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը կազմված էր Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ գիտական գծով տնօրեն Վ. Սահակյանից և Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրեն Ե. Ազարյանից: Նիստի օրակարգում ընդգրկված էին ՄՊԽ-ի ապագա գործունեության համար մի քանի ճակատագրական հարցեր՝ կապված Խորհրդի ապագա կառուցվածքի, ֆինանսավորման, անդամության և այլ խնդիրների հետ: Ներկայացվեց և քննարկվեց Խորհրդի ապագա գործունեության վերաբերյալ հայեցակարգը:

### **4. Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության մրցանակաբաշխություն**

2016 թվականի ապրիլի 27-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից անցկացվեց արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության մրցանակաբաշխությունը: Մրցանակները հանձնվեցին մրցույթում հաղթած 10 լավագույն կազմակերպություններին: Միջոցառմանը ներկա էին ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Է.Տարասյանը, ՍԱԻ տնօրեն Ե.Ազարյանը և Ռոսստանդարտի պետ Ա.Աբրամովը:

### **5. ԻՍՕ Խորհրդի 100-րդ նիստը և DEVCO Խորհրդի 25-րդ հանդիպումը**

#### **ԻՍՕ Զարգացող երկրների հարցերով քաղաքականության մշտական հանձնաժողովի (DEVCO) Խորհրդի 25-րդ հանդիպումը**

2016 թվականի մարտի 14-15 Շվեյցարիայի Ժնև քաղաքում, ԻՍՕ-ի գրասենյակում տեղի ունեցավ ԻՍՕ Զարգացող երկրների հարցերով քաղաքականության մշտական հանձնաժողովի (DEVCO) Խորհրդատվական խմբի 25-րդ նիստը: Նիստին մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրեն Ե.Ազարյանը:

Խորհրդատվական խումբը (DEVCO CAG) բաղկացած է 11 անդամից՝ ութ անդամ զարգացող երկրներից և երեք անդամ զարգացած տնտեսությամբ երկրներից: Խորհրդատվական խմբի անդամներն ընտրվում են ելնելով անդամների անձնական մասնագիտական հատկանիշներից՝ DEVCO նախագահի կողմից՝ ԻՍՕ գլխավոր քարտուղարի հետ փոխհամաձայնությամբ: Խորհրդատվական խմբի անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ: Խորհրդատվական խումբը հանդիպում է տարեկան երկու անգամ՝ մեկ անգամ մարտ ամսին, և երկրորդ անգամ՝ անմիջապես DEVCO համաժողովից հետո:

Խորհրդատվական խումբը քննարկեց DEVCO-ի կողմից 2015 թվականին իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունը, առաջարկություններ ներկայացրեց 2016 թվականին DEVCO-ի պլանավորած գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև քննարկեց DEVCO-ի Խորհրդատվական խմբի անդամներին ու նախագահին ապագայում ընտրության ընթացակարգը և առաջարկություններ նախապատրաստեց՝ ԻՍՕ Խորհրդի կողմից հաստատման համար: Խորհրդատվական խումբը քննարկեց նաև ԻՍՕ Ակադեմիայի կարգավիճակը և նրա գործունեության հեռանկարները:

## **ԻՍՕ Խորհրդի 100-րդ նիստը**

2016 թվականի մարտի 16-18 Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ ԻՍՕ Խորհրդի հերթական 100-րդ հրբեյանական նիստը, որին մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը: ԻՍՕ Խորհուրդը քննարկեց կազմակերպության հետագա զարգացմանն առնչվող մի շարք առանցքային հարցեր, այդ թվում՝ ֆինանսական ռազմավարությունը, անցած տարվա ֆինանսական կատարողականը և ցուցանիշները, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները, քաղաքականության մշտական հանձնաժողովների աշխատանքի հաշվետվությունները և այլն:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը առանձին հանդիպումներ ունեցավ գործընկեր ստանդարտացման կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին համագործակցության և ստանդարտացման ոլորտի մի շարք հարցեր:

## **6. ԿԱՍԿՕ 31-րդ պլենար նիստը Դուբայում, ԱՄԷ**

2016 թվականի մայիսի 3-5 Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ փոխտնօրեն Գ.Նազարյանը մասնակցեց Դուբայում ԿԱՍԿՕ-ի 31-րդ պլենար նիստի աշխատանքներին: Նիստի ընթացքում ԿԱՍԿՕ քարտուղարությունը ներակայացրեց վերջին մեկ տարվա ընթացքում համապատասխանության գնահատման ոլորտում իրականացված ստանդարտացման աշխատանքները, լսեցին ԿԱՍԿՕ-ի տեխնիկական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, քննարկվեցին միջազգային քաղաքականությանը վերաբերող հարցեր:

## **7. Համագործակցության հուշագիր Ամերիկայի ստանդարտացման ազգային մարմնի՝ ԱՆՍԻ-ի հետ**

2016թ. հունիսի 14-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում պաշտոնական հանդիպում ունեցավ Ամերիկայի ստանդարտացման ազգային մարմնի՝ ԱՆՍԻ ղեկավարության հետ, որի ընթացքում ստորագրվեց Համագործակցության հուշագիր: Հուշագիրն ուղղված է լինելու երկու երկրների միջև առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը: Կողմերը մանրամասն քննարկեցին հուշագրի իրագործման հնարավորությունները և ապագա անելիքները:

Հանդիպման վերջում կողմերը միմյանց հանձնեցին հուշանվերներ: ԱՆՍԻ նախագահ Ջո Բհաթիան ՍԱԲՄ պատվիրակությանը հանձնեց ԱՄՆ նախագահի հավաքածուից հուշանվերները:

## **8. Միջազգային աշխատաժողովի համաձայնագիր (IWA)՝ կաթիլային ոռոգման վերաբերյալ**

Օգոստոսի 31-Սեպտեմբերի 2, 2016, Ստոկհոլմ, Շվեդիա

Շուրջ 25 երկրի ներկայացուցիչներ հանդիպեցին Ստոկհոլմում, Շվեդիայի ստանդարտների ինստիտուտում (SIS)՝ քննարկելու և մշակելու նոր Միջազգային աշխատաժողովի համաձայնագիր (IWA) կաթիլային ոռոգման վերաբերյալ: Փաստաթղթում ընդգծվում է կաթիլային ոռոգման կարելիությունը ջրի և շրջակա միջավայրի պահպանության, մշակաբույսերի արտադրության եւ գյուղատնտեսության զարգացման առումով: Այն նաեւ

տրամադրում է ուղեցույցներ եւ առաջարկություններ պետական կառավարման մարմինների համար՝ խթանելու կաթիլային ոռոգումը, որը ճանաչված է որպես առավել արդյունավետ տեսակի ոռոգման միջոց: Հայաստանը աշխատաժողովին ներկայացնում էր Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն պարոն Գևորգ Նազարյանը:

### **9. ԻՍՕ-ի Ջարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՕ) 50-րդ նիստը**

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2016 թվականի սեպտեմբերի 11-ին մասնակցեց ՉԺՀ մայրաքաղաք Պեկինում տեղի ունեցած ԻՍՕ-ի Ջարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՕ) 50-րդ պլենար նիստին:

Նիստը իր բնույթով աշխույժ քննարկումների ոճով էր և տեղի ունեցան մի քանի խմբային ու միջանկյալ քննարկումներ (breakout sessions), որոնք նվիրված էին 2016-2020 թվականների Ջարգացող երկրներին աջակցության գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացմանը:

Նիստին առանձին ելույթով հանդես եկավ ԻՍՕ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար պարոն Քեվին Մաքքինլին, որի զեկույցը նվիրված էր միջազգային ստանդարտացման գործընթացում զարգացող երկրների դերակատարման բարձրացմանը և միջազգային ստանդարտացման աշխատանքներում զարգացող երկրներից շահագրգիռ կողմերի առավել ակտիվ մասնակցությանը:

ԴԵՎԿՕ 50-րդ պլենար նիստին հաջորդեցին երեք զուգահեռ խմբային քննարկումներ, իսկ ավելի ուշ այդ քննարկումների արդյունքներն ամփոփվեցին ընդհանուր պլենար նիստում: Խմբային քննարկումները կազմակերպվել էին հետևյալ թեմաներով՝

1. Ջարգացող երկրների Ստանդարտացման ազգային մարմինների ֆինանսական կայունություն՝ ճիշտ մոդելի ընտրություն,
2. Ստանդարտացման ազգային ռազմավարության մշակումը և իրականացումը,
3. Միջազգային ստանդարտացման զարգացող երկրների մասնակցության խթանում՝ զուգակցման, գործընկերության և այլ միջոցներով:

Այդ քննարկումների նպատակներ ընտրված առանցքային խնդիրների շուրջ վեր հանել զարգացող երկրների կարիքները և ձևավորել աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ՝ 2016-2020 թվականների Ջարգացող երկրներին աջակցության գործողությունների ծրագրի իրականացման համար: Ստանդարտացման ռազմավարական ծրագրերի մշակմանը նվիրված խմբային քննարկումը նախագահեց Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ փոխտնօրեն, ԴԵՎԿՕ Խորհրդի անդամ Գ.Նազարյանը: Քննարկման արդյունքների վերաբերյալ խմբային քննարկումների նախագահողները զեկույցով հանդես եկան ԴԵՎԿՕ-ի պլենար նիստին:

Սեպտեմբերի 11-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գ.Նազարյանը, որպես ԴԵՎԿՕ նախագահության խորհրդատվական խմբի անդամ (ՆԽԽ), մասնակցեց ԴԵՎԿՕ ՆԽԽ նիստին, որտեղ ամփոփվեցին պլենար նիստի ընթացքում ընդունված որոշումները և հստակեցվեցին հետագա ռազմավարական ուղղություններն ու անելիքները: ԻՍՕ Խորհրդի կողմից ԴԵՎԿՕ նոր նախագահ ընտրվեց Լիբանանի Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավար տիկին Լենա Դարգհամը, իսկ ԻՍՕ գլխավոր քարտուղարի

պաշտոնակատարի կողմից ԴԵՎԿՕ քարտուղար նշանակվեց ԻՍՕ-ի զարգացող երկրների հետ աշխատանքների համակարգող տիկին Սարի Ռաջակոսկին:

### **10. Միջազգային համագործակցության ոլորտում նոր ձեռքբերումները**

ԻՍՕ-ի վեհաժողովներին ներկայացված լինելը, բացի տեխնիկական բնույթի խնդիրների քննարկումից, համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի և ճանաչման ձեռք բերման լավագույն հնարավորություններից է: ԻՍՕ-ի անդամները մեծամասամբ բաց չեն թողնում այս հնարավորությունը որպեսզի շփվեն միմյանց հետ, ձեռք բերեն նոր պայմանավորվածություններ և հիմք դնեն համագործակցության նոր ձևերին:

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը 2016 թվականի սեպտեմբերի 11-14 մասնակցելով Պեկինում տեղի ունեցած ԻՍՕ-ի 39-րդ վեհաժողովին, առանձնակի հանդիպումներ ունեցավ ԻՍՕ-ի նախագահ պարոն Ժանգ Քսիաոզանգի, ԻՍՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար պրն Քեվին ՄքՔինլիի, Չինաստանի Ստանդարտացման Ադմինիստրացիայի (SAC) ղեկավար պարոն Թիան Շիհոնգի, ԱՄՆ-ի Ամերիկայի ազգային ստանդարտների ինստիտուտի (ANSI) նախագահ և տնօրեն պարոն Ջոն Բհաթիայի, Գերմանիայի Ստանդարտացման ինստիտուտի (DIN) տնօրեն Քրիստոֆ Ուինտերհալթերի և փոխտնօրեն Ռուդիգեր Մարգարթի, Ռուսաստանի Դաշնության Ռոսստանդարտի ղեկավար պարոն Ալեքսեյ Աբրամովի, ինչպես նաև Ֆրանսիայի, Ավստրիայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Լեհաստանի, Լիտվայի, Բելարուսի և մի շարք այլ երկրների պատվիրակությունների հետ: Այդ առանձնագրույցների և քննարկումների արդյունքում, մասնավորապես, տեղի ունեցավ փորձի փոխանակում և քննարկվեցին երկուստեք համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Հայաստանի պատվիրակությունը բանակցությունների արդյունքում մասնավորապես պայմանավորվածություններ ձեռք բերեց Լեհաստանի հետ ստանդարտացման և առևտրի խոջընդոտների վերացման ոլորտում համագործակցության համաձայնագրերի կնքման համար:

Ընդհանուր առմամբ, Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայումս չափազանց բարձր վարկանիշ ու հեղինակություն ունի միջազգային ստանդարտացման ասպարեզում և խորացնում է իր համագործակցությունը տարբեր երկրների հետ:

### **11. Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) 39-րդ վեհաժողովը**

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2016 թվականի սեպտեմբերի 11-14 մասնակցեց ՉԺՀ մայրաքաղաք Պեկինում տեղի ունեցած ԻՍՕ-ի (Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության) 39-րդ վեհաժողովին: 1994 թվականից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ԻՍՕ-ի թղթակից, իսկ 1997 թվականից լիիրավ անդամ: Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայումս մասնակցում է 65 տեխնիկական հանձնաժողովների և 3 քաղաքականության մշակման մշտական հանձնաժողովների՝ ԿԱՍԿՕ, ԴԵՎԿՕ և ԿՕՊՕԼԿՕ աշխատանքներին: 2014 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտը ԻՍՕ-ի վեհաժողովի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվել է ԻՍՕ Խորհրդի անդամ՝ 2015-2017 թվականների ժամկահատվածի համար:

Միջազգային ստանդարտացման կազմակերպությունը (ԻՍՕ), որի անդամակցությունը կազմված է 164 երկրների ստանդարտների ազգային ինստիտուտներից, կամավոր,

փոխհամաձայնության վրա հիմնված միջազգային ստանդարտների համաշխարհային ամենախոշոր մշակողն է, որը ներկայումս ունի ձեռնարկատիրությանն, կառավարությանն ու հասարակությանն ուղղված ավելի քան 22000 ստանդարտներ:

Սեպտեմբերի 11-ին տնօրեն Ե.Ազարյանը մասնակցեց ԻՍՕ Խորհրդի 101-րդ նիստին, որի ընթացքում քննարկվեցին ԻՍՕ 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, ԻՍՕ քարտուղարության տարեկան բյուջեն, ԻՍՕ-ի տարածաշրջանային ռազմավարության մշակման խնդիրները, ԻՍՕ-ի նոր գլխավոր քարտուղարի ընտրության հետ կապված հարցերը, ԴԵՎԿՕ նոր նախագահի նշանակումը, ԻՍՕ-ին զեկուցող մարմինների հաշվետվությունները և հաջորդ տարվա գործողությունների ծրագրերը և այլ ռազմավարական խնդիրներ:

ԻՍՕ 39-րդ վեհաժողովի կարգախոսն էր՝ «Ստանդարտները բարելավում են համաշխարհային հաղորդակցությունը» (Standards Improve Global Connectivity): Այդ կարգախոսն ընդգծում է միջազգային ստանդարտների դերը՝ որպես փոխհամաձայնության գալու և առանց խոչընդոտների մեկ ընդհանուր լեզվով համաշխարհային մակարդակով հաղորդակցվելու համար: Վեհաժողովի ընթացքում կազմակերպվեցին նաև խմբային քննարկումներ, որոնց նպատակն էր քննարկել միջազգային ստանդարտացման համար կարևորագույն խնդիրները: Ընտրվել էին հետևյալ չորս թեմաները՝

1. Պետական կառավարման մարմինների ներգրավումը,

2. Առաջիկայում սպասվող առավել մեծ ազդեցությամբ աշխարհահռչակ ստանդարտները,

3. Ծառայությունների ոլորտում նոր ստանդարտները,

4. ԻՍՕ կառավարման համակարգի քննարկումը:

Այդ քննարկումների նպատակն էր բացահայտել անդամ երկրների կարծիքը ԻՍՕ-ի կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ և հաշվի առնել ԻՍՕ-ի գործունեության բարելավմանն ուղղված բոլոր առաջարկությունները:

ԻՍՕ-ի 39-րդ վեհաժողովի ընթացքում ներկայացվեցին և հաստատվեցին ԻՍՕ ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքները, զեկույցով հանդես եկան ԻՍՕ գլխավոր քարտուղարի պաշտոնակատարը, ԻՍՕ նախագահը, ԻՍՕ քաղաքականության, ֆինանսական և տեխնիկական կառավարման գծով փոխնախագահները և ԻՍՕ գանձապահը:

Ընդհանուր առմամբ, ԻՍՕ 39-րդ վեհաժողովն անցկացվեց բարձր արդյունավետությամբ և արձանագրեց մի շարք էական ձեռքբերումներ, որոնք հետագայում էլ ավելի կբարձրացնեն ԻՍՕ միջազգային դերը և կնպաստեն ստանդարտացման համաշխարհային գործընթացների արդյունավետության աճին:

Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցան ԻՍՕ Խորհրդի նոր անդամների և ԻՍՕ նոր նախագահի ընտրությունները: ԻՍՕ Խորհրդի նոր անդամներ ընտրվեցին Մալայզիան, Էկվադորը և Խորվաթիան: ԻՍՕ նոր նախագահ ընտրվեց ներկայումս ԻՍՕ-ի փոխնախագահ, Կանադայի Ստանդարտացման ազգային մարմնի ղեկավար պարոն Ջոն Ուոլթերը:

Սեպտեմբերի 14-ին ավանդույթի համաձայն կազմակերպվեց բաց սեսիա, որը տեղի ունեցավ Պեկինի Ժողովրդական հանդիպումների տանը: Բաց սեսիայի ընթացքում կազմակերպվեցին պանելային քննարկումներ աշխարհահռչակ ու ճանաչված մասնագետների, ինչպես նաև միջազգային խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Դրանք նվիրված էին հետևյալ թեմաներին՝

1. Առևտրին և զարգացման աջակցող միջազգային ստանդարտները
2. Անվտանգ ու կայուն տրանսպորտ՝ ստանդարտների ու միջազգային գործընկերների ներդրումը
3. Միջազգային ստանդարտների աջակցությունը առևտրային հոսքերին, հաղորդակցությանը և կազմակերպությունների զարգացմանը:

Պանելային քննարկումներից հետո ԻՍՕ վեհաժողովի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց ՉԺՀ վարչապետ պարոն Լի Կեքիյանգը, ով իր խոսքում խիստ կարևորեց ստանդարտների կիրառումը տնտեսության ու ենթակառուցվածքների զարգացման, սպառողների ու քաղաքացիների համար անվտանգության և անհրաժեշտ որակի ապահովման համար:

## 2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

### 2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ինստիտուտը հետևողականորեն իրականացրել է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը և ստանդարտացման 2016 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 612-Ա որոշմամբ նախատեսված ստանդարտների մշակման աշխատանքները:

Ինստիտուտը ստանդարտացման աշխատանքներն իրականացրել է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ համատեղ: Մշակման գործընթացում մասնակցել են համապատասխան ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները՝ միաժամանակ գնահատելով ՀՀ-ում միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների կիրառման նպատակահարմարությունը՝ ազգային ստանդարտների կարգավիճակով: Ազգային ստանդարտները մշակվել են վերահրատարակման և հավանության եղանակներով:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը և ստանդարտացման 2016 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N612-Ա որոշման և դրա հիման վրա 2016 թվականի հունիսի 30-ին ՀՀ էկոնոմիկային նախարարության և ՍԱԻ միջև կնքված N65-16 պայմանագրի՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտներին ներդաշնակ թվով 60 ազգային ստանդարտների նախագծերի մշակման աշխատանքներ, որոնք ընդունվել և հաստատվել են Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի հրամանով:

Մշակվել են ազգային ստանդարտներ ՀՀ տնտեսության գերակայող հետևյալ ճյուղերում՝ շինարարություն, ռազմարդյունաբերության, բնապահպանություն, սննդամթերքի և գյուղատնտեսական մթերքի արտադրություն, համապատասխանության գնահատման, կոսմետիկական արտադրանքների, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ և այլն:

### 2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ստանդարտների ազգային ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել է ՀՀ ընկերությունների մասնակցությունը ԻՍՕ-ի 45 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի և 18 ենթահանձնաժողովի աշխատանքներին:

Կազմակերպվել են միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 82 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

ՍԱԻ կողմից իրականացվել են աշխատանքներ միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ինչպես նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների հետ:

Իրականացվել են հետևյալ միջպետական ստանդարտացման աշխատանքները՝



1. կազմակերպել և կատարել է շուրջ 907 միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն,

2. կատարել է ԱՊՀ երկրների Միջպետական ստանդարտացման խորհրդի (ՄՍԽ) շուրջ 45 հանձնարարականներ,

3. կազմակերպել է շուրջ 430 միջպետական ստանդարտների նախագծերի համաձայնեցում 57 ՀՀ շահագրգիռ կազմակերպությունների հետ,

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և պատշաճ և հավաստի տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին գործող ստանդարտների վերաբերյալ:

### **2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

2016 թվականին Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 2755 միջպետական (ԳՕՍՏ) և Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) և 60 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով:

Ստանդարտների ազգային ինստիտուտն իրականացրել է նաև ՀՀ-ում ընդունված և գործող ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստեղծման և կայքում տեղադրման աշխատանքներ՝ ստանդարտների էլեկտրոնային վճարման համակարգի ներդրման նպատակով:

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար հրատարակվել է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» թվով 4 տեղեկատուներ և պատրաստվել է ՀՀ կազմակերպությունների համար 12 տեղեկատվական թերթիկ՝ ազգային ֆոնդում համալրված բոլոր ստանդարտների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ինստիտուտի բոլոր բաժանորդներին:

2016թ. Ինստիտուտը ՀՀ կազմակերպությունների հետ կնքել է 31 պայմանագիր՝ բաժանորդային սպասարկման աշխատանքների իրականացման նպատակով:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել են աշխատանքների հանձնման-ընդունման համապատասխան ակտերը հետևյալի մասով.

- տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում՝ ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- բաժանորդին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 260),
- խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ:

Կազմակերպություններին բաժանորդային սպասարկումից Ստանդարտների ազգային ինստիտուտի հասույթը կազմել է **4560000 ՀՀ դրամ**:

Ստանդարտների վաճառքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով՝ ըստ հաստատված գնահաշվարկի և տրված հաշիվ-ապրանքագրի կամ անդորրագրի: Ազգային ստանդարտների վաճառքի դեպքում կազմակերպության կողմից ներկայացվում է անհրաժեշտ ստանդարտների գնման հայտ և կնքվում է պայմանագիր:


Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է **1286014 դրամի** (թվով 185 հատ) ստանդարտների վաճառք ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին:

2016թ. ըստ կնքված պայմանագրի ԼՂՀ ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման կենտրոնին տրամադրվել են ընդհանուր 183800 ՀՀ դրամի ստանդարտներ:

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2010-2016թթ. քանակական և 2011-2016թթ. գումարային դինամիկան ներկայացված է գծանկարներ 2-ում:


**Գծանկար 1.**

**ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2010-2016թթ. քանակական դինամիկան**



**Գծանկար 2**

**ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2011-2016թթ. գումարային դինամիկան, հազ.դրամ**




Ինչպես երևում է գծանկար 2-ից, ստանդարտների վաճառքը որոշակի անկում է արձանագրել: Նշված հանգամանքը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են վաճառքի ցածր մատչելիությունը, ցածր իրազեկվածությունը և այլն:

Ինստիտուտը 2016 թվականի ընթացքում կատարել է կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) փորձաքննություն, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար կազմակերպության ստանդարտներ (տեխնիկական պայմաններ)՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:

2016թ. ընթացքում իրականացվել է 168 կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) և դրանց 86 փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ: Այդ աշխատանքներից ստացված հասույթը 2016 թվականին կազմել է **6126.3 հազ. դրամ**:

### Գծանկար 3.

#### Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից հասույթը 2015-2016թթ.



### 3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտում գործել են 4 հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ, այդ թվում՝

1. Լաբորատոր փորձարկումների կենտրոնի փորձարկման լաբորատորիան,
2. Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան,
3. Նավթամթերքների և ֆիզիկաքիմիական փորձարկումների լաբորատորիան,
4. Գյումրու ԼՓԿ փորձարկման լաբորատորիա:

#### 3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 95 հայտ, տրվել է 95 փորձարկման արձանագրություն: Իրականացվել են լաբորատորիայի հավատարմագրման հետ կապված աշխատանքները, որոնք դրական եզրակացություն են ստացել հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

#### 3.2. ՄՆՆԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Լաբորատոր փորձարկումների կենտրոնի փորձարկման լաբորատորիան միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրակարգ սարքավորումներով հագեցված լաբորատորիա է: Գյումրու տարածքային փորձարկման լաբորատորիայի հագեցվածությունը և հնարավորությունները համեմատաբար առավել թույլ են, առկա են հնամաշ սարքավորումներ, որոնք փոխարինման կարիք են զգում:

Հաշվետու ժամանակաշրջանում Լաբորատոր փորձարկումների կենտրոնի փորձարկման լաբորատորիան ընդունել է սննդամթերքների և ոչ պարենային ապրանքների փորձարկման 423 հայտ և տրվել են նույնքան փորձարկման արձանագրություններ, Գյումրու ԼՓԿ փորձարկման լաբորատորիան՝ 1041 հայտ և 1041 փորձարկման արձանագրություններ:

Լաբորատորիաների խնդիրներից է բարձրակարգ ու երիտասարդ մասնագետների պակասը, որոնց ներգրավումը խոչընդոտվում է ցածր աշխատավարձերով: Բացի այդ, լաբորատոր փորձարկումների գները և փորձարկումների առկա պահանջարկը բավականաչափ բարձ չեն, որպեսզի կարողանան ծածկել անհրաժեշտ կապիտալ ծախսերը:

Լուրջ խնդիր է նաև փորձարկման առկա սարքավորումների օգտագործման գծով անձնակազմի ուսուցման կազմակերպումը, ինչի համար կարիք կա ներգրավելու միջազգային փորձագետների: Լաբորատոր նյութերի ձեռք բերումը ևս խնդիրներ է առաջացնում, քանի որ մեծամասամբ կարիք է առաջանում բարձրակարգ նյութերը ներմուծել արտասահմանից:


### 3.3. ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱ

Այս լաբորատորիան տեղակայված է ք.Երևան, Հ.Էմինի 31ա տարածքում: Այն ունի միջին բավարար հագեցվածություն, ինչը թույլ է տալիս պատշաճ ձևով իրականացնել նավթամթերքների համար սահմանված պահանջների փորձարկումները:

Հաշվետու ժամանակաշրջանում նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում կատարվել է 881 փորձարկում, որից 881 համար տրվել է համապատասխանության եզրակացություն:

#### Գծանկար 4

**Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակը 2013-2016թթ.**



Ձեռքբերումների թվին են դասվում նաև 2016թ. մայիսի 6-ին ԼՓԿ փորձարկման լաբորատորիայի հավատարմագրումը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից:

2016թ.-ին փորձարկման լաբորատորիաները մասնակցել են միջլաբորատոր փորձարկումներին: Փորձարկման արդյունքները գնահատվել են բավարար:

2016թ.-ին լաբորատոր սարքավորումների ստուգաչափում չի իրագործվել:

Առկա են նաև մի շարք խնդիրներ կապված ստանդարտ նմուշների ձեռքբերման հետ, օդափոխության համակարգի արդիականացման հետ, լուսավորման և այլն:

## 4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները (ՍՄ) շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն շարունակում են գերակայել հանրապետությունում հավատարմագրված այլ ՍՄ նկատմամբ:

### 4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են՝

#### **ա) ոչ պարենային ապրանքների գծով՝**

196 ներկրվող արտադրանքի և 24 տեղական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 220) (2015 թվականին՝ 605 ներկրվող արտադրանքի և 48 տեղական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 653)),

981 ներկրվող արտադրանքի և 74 տեղական արտադրանքի համապատասխանության հայտարարագիր (ընդամենը՝ 1055) ) (2015 թվականին՝ 1100 ներկրվող արտադրանքի և 43 տեղական արտադրանքի համապատասխանության հայտարարագիր (ընդամենը՝ 1143)),

իրականացվել է համապատասխանության հսկողություն 36 հատ (2015թ.-ին՝ 28 հատ),

կատարվել է տեխնիկական պայմանների 23 փորձաքննություն, մերժում՝ 1 հատ:

Ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման գծով 2016 թվականին ընդունվել է 936 հայտ, 2015 թվականին՝ 1542 հայտ:

#### **բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝**

1610 (2015 թվականին՝ 1004 համապատասխանության հայտարարագիր) համապատասխանության հայտարարագիր, այդ թվում՝ 615 ներկրվող արտադրանքի և 997 տեղական արտադրության համար:

Տրվել է համապատասխանության սերտիֆիկատ 98 հատ (2015թ.-ին՝ 354 հատ):

Իրականացվել է համապատասխանության հսկողություն՝ 20,

2016թ. ընդունվել է 1089 հայտ (2015թ.՝ 1074 հայտ):

#### **գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով՝**

տրվել է սննդի ապահովման ծառայության 92 (2015թ.՝ 156) համապատասխանության սերտիֆիկատ,

81 (2015թ.՝ 109) ընկերություններում կատարվել է սննդի ապահովման ծառայության համապատասխանության հսկողություն:

Ծառայությունների սերտիֆիկացման գծով 2016 թվականին ընդունվել է 92 հայտ, 2015 թվականին՝ 91:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և իրականացվել են արտադրանքի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման մարմնի կողմից իրականացված սերտիֆիկացման աշխատանքների ընդհանուր քանակական ցուցանիշները ներկայացված են ստորև՝

## Աղյուսակ 2

### Տրված սերտիֆիկատների և հայտարարագրերի քանակը (ԵՏՄ շրջանակում)

Հ/Հ	Սերտիֆիկատներ և հայտարարագրեր (ԵՏՄ շրջանակում)	Չափման միավոր (հատ)
1.	Տրված համապատասխանության սերտիֆիկատներ, ընդամենը	124
1.1	Այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	110
1.2	ՀՀ տարածքում արտադրվող արտադրանքի համար, ընդամենը	4
1.2.1	Այդ թվում՝ սերիական արտադրանքի համար	4
1.2.2	Խմբաքանակի համար	-
1.2.3	Այդ թվում՝ արտահանման համար	-
2	Մերժված հայտեր, ընդամենը	-
2.1	Այդ թվում՝ անհամապատասխանության պատճառով	-
3.	Գրանցված հայտարարագրեր, ընդամենը	2010
3.1	Այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	1332
3.2	ՀՀ-ում արտադրվող արտադրանքի համար	675

## Աղյուսակ 3

### Տրված սերտիֆիկատների և հայտարարագրերի քանակը

Հ/Հ	Սերտիֆիկատներ և հայտարարագրեր	Չափման միավոր (հատ)
1.	Տրված համապատասխանության սերտիֆիկատներ, ընդամենը	194
1.1	Այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	42
1.2	ՀՀ տարածքում արտադրվող արտադրանքի համար, ընդամենը	126
1.2.1	Այդ թվում՝ սերիական արտադրանքի համար	60
1.2.2	Խմբաքանակի համար	-
1.2.3	Այդ թվում՝ արտահանման համար	15
2	Մերժված հայտեր, ընդամենը	-
2.1	Այդ թվում՝ անհամապատասխանության պատճառով	-
3.	Գրանցված հայտարարագրեր, ընդամենը	655
3.1	Այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	501
3.2	ՀՀ-ում արտադրվող արտադրանքի համար	155

## Աղյուսակ 4

### 2015 թվականի և 2016 թվականի ընթացքում տրված սերտիֆիկատների և հայտարարագրերի քանակական համեմատական վերլուծությունը.

	2015թ	2016թ
Սերտիֆիկատներ ԵԱՏՄ	2 հատ	124 հատ
Սերտիֆիկատներ ազգային և կամավոր	1007 հատ	194 հատ
Հայտարարագրեր ԵԱՏՄ	287 հատ	2010 հատ
Հայտարարագրեր ազգային և կամավոր	2147 հատ	655 հատ

## 4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից ընդունվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացման 20 հայտ:

17 կազմակերպություններում իրականացվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացում:

29 կազմակերպություններում իրականացվել են սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության աշխատանքներ:

Կազմակերպվել և իրականացվել են կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 26-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշման համաձայն կազմվել է 2016թ. միջոցառումների պլան:

Հրատարակվել է «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման» բնագավառում ՀՀ 2016թ. մրցույթի «Ձեռնարկ-Տեղեկատու» և ուղարկվել են գրություններ ՀՀ պետական կառավարման մարմիններին, Մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամներին և հավակնորդ կազմակերպություններին:

Ապահովվել է պետական կառավարման մարմիններից համակարգի հավակնորդ կազմակերպությունների ցանկերի ստացումը և տեղեկատվության տրամադրումը:

2016թ. ընթացքում «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով և Ստանդարտների ազգային ինստիտուտի [www.sarm.am](http://www.sarm.am) կայքով հանրությանը տեղեկացվել է 2016 թվականի արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության մրցույթի անցկացման մասին:

Իրականացվել է մրցույթին մասնակցելու համար հավակնորդ կազմակերպություններից հայտերի ընդունման, ինքնագնահատման փաստաթղթերի ստացման գործընթացը:

Ապահովվել է Հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված փորձագիտական հանձնախմբի աշխատանքների կազմակերպումը հավակնորդ կազմակերպություններում:

ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 26-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվել են հավակնորդ կազմակերպությունների գնահատման աշխատանքները, որոնք ավարտվել են և ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվել են փորձագիտական եզրակացություններ: Մրցանակի արժանացած կազմակերպությունների ցանկը ներկայացվել է կառավարություն՝ հաստատման:



## 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ 10 կազմակերպությունից ստացված նամակների ու հայտերի համաձայն՝ 31 հայտատուից ձևավորվել է դասընթացների ունկնդիրների 4 խումբ և նախադիպլոմային ու արտադրական պրակտիկա անցկացնող բուհերի ուսանողների 1 խումբ: Սահմանված կարգով Ուսումնական կենտրոնում (այսուհետ՝ Կենտրոն) կազմակերպվել են **ընդհանուր, մասնագիտական և ներածական դասընթացներ**: Դասընթացներում սահմանված կարգով ներգրավվել և վերապատրաստվել է Ստանդարտների ազգային ինստիտուտի տարբեր ստորաբաժանումների 5 աշխատակից: Դասընթացներից ստացված գումարը կազմում է **1040000** դրամ:

2015թ.-ի 17 խմբում ընդգրկված 97 ունկնդրի փոխարեն 2016 թ.-ի ընթացքում 11 խմբում ընդգրկված են եղել 60 ունկնդիր, որոնցից 32-ը ուսումնական և նախադիպլոմային պրակտիկայի ուսանողներ:

2015 թ.-ին անցկացվել է 480 դասաժամ, 2016թ.-ին՝ 228 դասաժամ, 29 ունկնդիր սպասարկվել է անվճար:

## 6. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ՍԱԻ հասույթը կազմել է **221,3 մլն դրամ**:

Աղյուսակ 5.

2016 թվականի փաստացի եկամուտները և տարեկան կանխատեսումները, հազ. դրամ


Ծառայության անվանումը	Կանխատեսում տարեկան	Ընդամենը (փաստացի)	Տարբերություն
Համապատ. հավաստման ծառայություններ	65000,0	44384	-20616
Պարենային և ոչ պարենային ապրանքների փորձաքննության կատարում	110000,0	97153	-12847
Ծառայությունների սերտիֆիկացում	9000,0	8235	-765
Որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում	40000,0	32865	-7135
Ստանդարտացման պետ. Պատվեր, ստ. Վաճառք, Տպ գրանցում, փորձաքննություն, Մասնագետների ուսուցում և վերապատրաստում	51000,0	38697	-12307
<b>Ընդամենը</b>	<b>275000,0</b>	<b>221330,0</b>	<b>-53670</b>

## 2016թ. փաստացի ծախսերը և տարեկան կանխատեսումները, հազ. դրամ

Ծախսային հոդված	Կանխատեսում տարեկան	Փաստացի	Տարբերություն
Աշխատավարձ	187000,0	195001	-8001
Գրեն., տնտ., գրենակ., լաբ. նյութեր	6500,0	5469	1031
Ներկայացուցչական ծախսեր	2500,0	2773	-273
Տրանսպ.պահպանման ծախսեր	10000,0	9486	514
Կապի ծառ., գրասենյակային	6000,0	5584	416
Էներգիա, գազ	12000,0	13271	-1271
Վարձավճար	2300,0	1405	895
Գործուղման ծախսեր	14000,0	19018	-5018
Այլ վարչական ծախսեր	12000,0	7963	4037
Մաշվածություն	10000,0	4336	5667
Ընթացիկ վերանորոգում	7000,0	0	7000
<b>Ընդամենը</b>	<b>269300,0</b>	<b>264307,0</b>	<b>4997,0</b>

Աղյուսակներ 5 և 6-ում ներկայացված հիմնական գործունեության ցուցանիշներից հետևում է, որ 2016 թվականին ստացված փաստացի եկամուտների ու կատարված փաստացի ծախսերի տարբերությունը կազմել է -42977 հազ. դրամ: Այդուհանդերձ, ընդհանուր գործունեության արդյունքներով 2016 թվականին վնասը կազմել է -16,9 մլն դրամ: Համեմատության համար՝ 2015 թվականին ընդհանուր գործունեության շահույթը կազմել է 3556 հազ. դրամ:

**ՍԱԻ հիմնական գործունեությունից համախառն եկամտի 2012-2016թթ. դինամիկան, մլն.դրամ**



**7. 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ ֆինանսատնտեսական վիճակի բարելավման ու գործունեության արդիականացման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել հեռանկարային զարգացման գործարար ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրով ներկայացվում են ՍԱԻ գործունեության հիմնական ուղղությունները, նկարագրվում է վերջին տարիների ընթացքում ձևավորված իրավիճակը, ներկայացվում են ՍԱԻ ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև առկա ֆինանսատնտեսական վիճակը: Առկա ցուցանիշների և իրավիճակի վերլուծության հիման վրա առաջարկվում է ներդնել նոր բիզնես մոդել: Ծրագիրը քննարկում է նաև այլընտրանքային մոդելների կիրառման հնարավորությունը: ՍԱԻ բարեփոխման մոդելով ներկայացված են հետևյալ հիմնական ու հիմնարար առաջարկությունները՝

ա) Ընկերության ինստիտուցիոնալ կառուցվածքի օպտիմալացում: Նախատեսվում է սահմանել կուռ կազմակերպական կառուցվածք և կրճատել 46-50 հաստիքային միավոր, որի շնորհիվ միայն աշխատավարձի ֆոնդի հաշվին տարեկան կտնտեսվի շուրջ 70 մլն դրամ:

բ) Ստանդարտացման և պետությանը մատուցվող այլ ծառայությունների առավել զարգացած ենթակառուցվածքի սահմանում: Անհրաժեշտ է ՍԱԻ-ի կողմից պետությանը մատուցվող ծառայությունների տեսակները հստակեցնել ու ճշգրտել, գնահատել ամբողջական ծավալով և ապահովել բոլոր ծառայությունների դիմաց համարժեք պետական

Ֆինանսավորումը: Օրինակ, ԵԱՏՄ անդամակցությունից բխող մշտական գրագրության ու ներկայացվող ստանդարտների ցանկերի նախագծերի քննարկման, փորձաքննության իրականացման գործունեությունը պետական որևէ ֆինանսավորման չի արժանանում: Պետական մարմիններին ստանդարտները և դրանց վերաբերյալ խորհրդատվությունը տրամադրվում են անվճար: Ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված ստանդարտացման աշխատանքները չպետք է ներառված լինեն ընդհանուր ստանդարտացման ծրագրում և պետք է առանձին ֆինանսավորվեն, և այլն:

գ) Համապատասխանության գնահատման ծառայությունների մասով մասնավոր հատվածում զարգացած ոլորտներում, մասնավորապես՝ սննդամթերքի փորձարկման ու սերտիֆիկացման ոլորտում, ծառայությունների մատուցումից հրաժարում:

դ) Տեխնիկական կանոնակարգման որոշ ոլորտներում հանրապետությունում բացակայող կարողությունների ձևավորում՝ թեթև արդյունաբերության և կահույքի ոլորտներում նոր լաբորատորիաներ հիմնելու միջոցով, ինչպես նաև նավթամթերքի ու էլեկտրատեխնիկական արտադրանքների փորձարկման կարողությունների զարգացում: Սպառողական շուկայի համար առավել մեծ վտանգ ներկայացնող մի շարք արտադրատեսակների համար մաքսազերծման փուլում պարտադիր համապատասխանության հավաստման պահանջի սահմանում, այդ նպատակով իրավական ակտերում կատարելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

ե) Ծրագիրն առաջարկում է օտարել ներկայումս ՍԱԻ սեփականության զգալի գույքային համալիրներ, որոնք չեն օգտագործվում ընկերության կանոնադրական նպատակներով և կարող են ապահովել Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (շուրջ 1150 մլն դրամ): Փոխարենը առաջարկվում է Երևան քաղաքում գտնվող ՍԱԻ սեփականությունը հանդիսացող շուրջ 5000 քմ հողատարածքի վրա կառուցել նոր, ժամանակակից չափանիշներին համապատասխան մասնաշենք՝ վարչական ու լաբորատոր փորձարկումների կենտրոնի մասերով, որտեղ կկենտրոնացվեն ՍԱԻ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները: